# Մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի դրսևորումները Ռուսաստանի Դաշնության քաղաքականության և ռուս-վրացական հարաբերությունների համատեքստում

*Գալոյան Կ.Ա.*
*ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ (Հայաստան, Երևան)*
*karogaloyan@gmail.com*

**Վճռորոշ բառեր՝** մեսխեթցի թուրքեր, հայրենադարձություն, Ռուսաստանի Դաշնության քաղաքականություն, ռուս-վրացական հարաբերություններ, Հայաստանի շահեր

***Проявление проблемы месхетинских турок в контексте политики Российской Федерации и русско-грузинских отношений***

*Галоян К.А.*
*Институт востоковедения НАН РА (Армения, Ереван)*
*karogaloyan@gmail.com*

**Резюме**: В статье рассматривается и анализируется политика России в отношении проблемы месхетинских турок и ее проявление в русско-грузинских отношениях. Выявляя интересы и позиции Москвы, автор сравнивает их совместимость с геополитическими интересами Армении, что может быть полезным для формирования мнения экспертного сообщества в кризисной ситуации.
**Ключевые слова:** месхетинские турки, репатриация, политика России, русско-грузинские отношения, интересы Армении.

***The issue of the Meskhetian Turks in the context of the policy of the Russian Federation and relations between Russia and Georgia***

*Galoyan K.*
*The Institute of Oriental Studies NAS RA (Yerevan, Armenia)*
*karogaloyan@gmail.com*

**Abstract:** This article examines and analyzes Russia's policy regarding the issue of the Meskhetian Turks and its manifestation in the relations of Russia and Georgia. Educing interests and positions of Moscow, the author compares their compatibility with geopolitical interests of Armenia. This article may be useful to form an opinion of expert community in a crisis situation.
**Keywords:** the Meskhetian Turks, repatriation, policy Russia, Russian-Georgian relationas, interests of Armenia.

**Ներածություն**

Մեսխեթցի թուրքերի էթնոկրոնական խումբը կազմավորվել է պատմական Մեսխեթի շրջանում (ժամանակակից Սամցխեի տարածքը)։ Այստեղից էլ ծագում է նրանց ներկայիս անվանումը, որը հաճախակի հանդիպում է գիտական գրականության մեջ։ Իրենց ինքնանվանումն է «ահըսկա թուրքեր» (ahıska türkleri), որը թարգմանվում է որպես «ախալցիխեի թուրքեր»՝ Ախալցիխեի շրջանի անվանումից։ Մեսխեթցի թուրքերը սունի մահմեդականներ են և խոսում են թուրքերենի արևելաանատոլական բարբառներից մեկով։

1944թ. նոյեմբերին ԽՍՀՄ Պաշտպանության Պետական Կոմիտեի հրամանով մեսխեթցի թուրքերին քրդերի և մահմեդական համշենցիների (հեմշինների) հետ միասին Վրաստանից արտաքսեցին կենտրոնական Ասիայի երկրներ (Ուզբեկստան, Ղազախստան, Ղրղզստան)։ Արտաքսվածների ընդհանուր թիվը մոտ 90 հազար էր[1]։ Ի տարբերություն մյուս արտաքսված ժողովուրդների, 1956թ. մեսխեթցի թուրքերին չթույլատրվեց վերադառնալ իրենց նախկին ապրելավայրերը։ 1989թ. Ուզբեկստանում տեղի ունեցան Ֆերգանայի ջարդերը, որոնք ուղղված էին մեսխեթցի թուրքերի դեմ, որից հետո նրանց Վրաստան վերադառնալու խնդիրը դարձավ էլ ավելի արդիական։ Մեսխեթցի թուրքերի հարցը սուր զարգացում ստացավ նաև Ռուսաստանում։ Ներկայումս մեսխեթցի թուրքե-

[1] **Бугай Н.Ф.,** Турки из Месхетии: долгий путь к реабилитации (1944–1994). Москва, Изд. дом «РОСС», 1994, с. 76–77.

րի հիմնախնդրի տակ ընկալվում են նրանց Վրաստան վերաբնակեցնելու, բնակության վայրերում հասարակությանն ինտեգրվելու և դրանից բխող մի շարք այլ սոցիալ տնտեսական բնույթի հարցերը:

Մեսխեթցի թուրքերի հայրենադարձության հարցը որոշակի դեր է խաղում տարածաշրջանում Ռուսաստանի քաղաքականության պարագայում և Վրաստանի հետ նրա հարաբերություններում: Այն շոշափում է նաև Հայաստանի անվտանգության շահերը, քանի որ Սամցխե-Ջավախեթին ունի կարևոր ռազմաքաղաքական նշանակություն մեր երկրի համար: Այդ պատճառով տվյալ բազմակողմանի հարցի ուսումնասիրումը՝ խնդրի սրացման դեպքում, կարող է օգտակար լինել Հայաստանի ճիշտ դիրքորոշման համար:

**Ռուսաստանի Դաշնության քաղաքականությունը մեսխեթցի թուրքերի նկատմամբ**

Դեռևս Խորհրդային Միության փլուզումից առաջ մեսխեթցի թուրքերի փոքրաթիվ մասը կենտրոնական Ասիայի հանրապետություններից սկսեցին տեղափոխվել Ռուսաստանի տարածք[2]: Ֆերգանայի դեպքերից հետո խորհրդային իշխանությունները որոշում ընդունեցին կազմակերպված ձևով 16 հազար մեսխեթցի թուրքերի վերաբնակեցնել Բելգորոդի, Վորոնեժի, Կալինինի, Կուրսկի, Օրլովի և Սմոլենսկի շրջաններում[3]: Սակայն իրականում վերաբնակեցվողների քանակը մի քանի անգամ ավել էին: Կյանքի ոչ բարենպաստ պայմանները ստիպեցին նրանց որոշ մասին տեղափոխվել Հյուսիսային Կովկաս, Ուկրաինա և Ղազախստան: Որոշ տվյալներով կենտրոնական Ռուսաստանում բնակվում են 17 հազար մեսխեթցի թուրքեր[4]: Հյուսիսային Կովկասում մեսխեթցի թուրքերը բնակություն հաստատեցին այն վայրերում, որտեղ մինչ այդ ապրել էին հայրենադարձված Ղրիմի թաթարները և հույները, այսինքն, Ապշերոնսկի, Բելորեչենսկի, Ղրիմի և Աբինսկի շրջաններում: Սակայն, տեղական իշխանությունների կողմից մշտական գրանցման իրավունքի և վերաբնակեցման հատուկ ընթացակարգի փոփոխումը, որը նաև ուղղված էր Ադրբեջանից հայ փախստականների դեմ, վատթարացրեց մեսխեթցի թուրքերի կացությունը:

1991թ. ապրիլին ՌԽՖՍՀ Գերագույն Խորհուրդը ընդունեց «Բռնաճնշված ժողովուրդների իրավունքների վերականգնման մասին» օրենքը[5]: Օրենքում սահմանվում էր բռնաճնշված ժողովուրդներ եզրույթի նշանակությունը և քննադատվում բռնաճնշումներն իրականացնելու համար ընդունված իրավական ակտերը: Սակայն պետք է նշել, որ օրենքում այդ ժողովուրդները ներկայացված էին հավաքական անվան տակ և որևէ էթնիկ խմբի անուն չէր հիշատակվում, ինչի պատճառով էլ պարզ չէր, թե որ էթնոսներին էր այն վերաբերվում: Գործնականում, այդ օրենքը և նրանից բխող այլ որոշումները վերաբերվում էին միայն ՌԴ տարածքից կամ նրա տարածք տեղահանված ժողովուրդներին և չէին տարածվում մեսխեթցի թուրքերի նկատմամբ[6]:

1991թ. ընդունվեց նաև «Քաղաքական բռնաճնշումների ենթարկված անձանց իրավունքների վերականգնման մասին» օրենքը[7], որը տարածվում էր նաև խորհրդային իշխանությունների կողմից բռնաճնշումների ենթարկված ՌԴ տարածքում բնակվող անձանց, իսկ օրենքի 11 և 12 կետերի համաձայն՝ նաև այլ միութենական հանարապետություններում բռնաճնումների ենթարկման մասին վկայող փաստաթղթեր ստացած անձանց նկատմամբ: Փաստորեն մեսխեթցի թուրքերն անհատականորեն ճանաչվում էին որպես բռնաճնշումների ենթարկված անձիք, սակայն որպես հավաքական խումբ՝ ոչ: Այս երկակի իրավիճակը երկար չշարունակվեց և հետագայում մեսխեթցի թուրքերին դադարեցին տրամադրել համապատասխան փաստաթղթեր նաև անհատական դիմումների հիման վրա[8]:

---

[2] **Осипов А.Г.,** Ферганские события: конструирование этнического конфликта - http://igpi.ru/info/people/osipov/1172304934.html (12.01.2019).

[3] **Симоненко В.А.,** Месхетинские турки: историческая судьба и проблемы культурной адаптации, дис. канд. ист. наук., Краснодар, 2002, с. 108.

[4] დეპორტირებული მესხები: ფერგანამდე და უკან - http://www.tabula.ge/ge/story/54490-deportirebuli-mesxebi-ferganamde-da-ukan (12.01.2019).

[5] Закон РСФСР о реабилитации репрессированных народов - http://pravo.gov.ru/proxy/ips/?docbody=&link_id=15&nd=102011245 (20.03.2019).

[6] **Усманов А.О**., К вопросу о конституционно-правовой реабилитации месхетинских турок: политико-правовой аспект// Гуманитарные и юридические исследования, 2017, №3, с. 160-161.

[7] Закон РФ «О реабилитации жертв политических репрессий» - http://pravo.gov.ru/proxy/ips/?docbody=&nd=102012774 (20.03.2019).

[8] **Усманов А.О**., նշվ. աշխ., с. 161.

1994թ. ՌԴ նախագահի հրամանագրով ստեղծվեց մեսխեթցի թուրքերի խնդիրների լուծման համար դաշնային կառավարական հանձնաժողով, որը բանակցություններ էր վարում Վրաստանի իշխանությունների հետ մեսխեթցի թուրքերին Վրաստան վերադարձնելու նպատակով, սակայն որևէ կոնկրետ համաձայնություն ձեռք բերելու և առանց որևէ որոշում կայացնելու, հանձնաժողովն արձակվեց: 1998-2002թթ. հանձնաժողովը վերսկսեց իր աշխատանքը: Այս անգամ ևս որևէ էական տեղաշարժ չգրանցվեց, իսկ որոշ հետազոտողներ նաև նշում են, որ հանձնաժողովը հարցը դիտարկում էր զուտ որպես անվտանգության և միջազգային հարաբերությունների, այլ ոչ թե սոցիալական ինտեգրման և մարդու իրավունքների պաշտպանության հարթակում[9]:

1996թ. մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի լուծման գործընթացին միացան նաև միջազգային կառույցները, մասնավորապես, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը և ԵԱՀԿ-ն: Մի քանի տարի շարունակ կազմակերպվեցին Վրաստանի, ՌՖ-ի, Թուրքիայի, Ադրբեջանի, ԱՄՆ-ի և Ուկրաինայի մեսխեթցի թուրքերի ներկայացուցիչների մի շարք հանդիպումներ: 1999 թ. մարտին Վիեննայում կայացած ոչ պաշտոնական խորհրդակցություններում քննարկվեց նաև Կրասնոդարի երկրամասում մեսխեթցի թուրքերի կարգավիճակը: Ռուսաստանի Դաշնության ազգային քաղաքականության առաջին փոխնախարար Կ.Մ. Ցագոլովը հայտնեց պաշտոնական դիրքորոշում, նշելով, որ մեսխեթցի թուրքերի խնդիրը միայն նրանց Վրաստանում վերաբնակեցնելու պայմանների բացակայության մեջ է: Նա նաև հայտարարեց, որ մեսխեթցի թուրքերը Ռուսաստանի Դաշնությունում ժամանակավոր բնակիչներ են և առանձին ներքին հակամարտությունները համակարգային բնույթ չեն կրում ու նրանց իրավունքների խախտում չեն համարվում[10]: ՌԴ իշխանությունն այս դիրքորոշումը շարունակեց պահպանել նաև հետագա տարիներին, իսկ մեսխեթցի թուրքերին ՌԴ քաղաքացիության շնորհման հարցում երկրի քաղաքականությունը փոփոխություն չկրեց: Կրասնոդարի երկրամասում տեղական իշխանությունները նրանց վերաբերվում էին չափազանց սառը[11]:

Կռասնոդարի շրջանում մարդու իրավունքների խախտումները շարունակեցին մնալ միջազգային կառույցների ուշադրության կենտրոնում, որոնց ջանքերով հարցը պարբերաբար բարձրացվում էր տարբեր մակարդակներում: Արդյունքում 2004թ. մարտին Ռուսաստանում ԱՄՆ-ի դեսպանատունը պաշտոնապես հայտարարեց մեսխեթցի թուրքերի Նահանգներում վերաբնակեցման ծրագրի գործընթացի սկսման մասին[12]: Ռուսական կողմը չխոչընդոտեց Միացյալ Նահանգներում նրանց վերաբնակեցմանը, նույնիսկ կողմ էր այդ գաղափարին: Մինչև 2007 թվականը ներկայացվել էր ավելի քան 21 հազար դիմում, որոնցից մոտ 15 հազար մարդ ստացել է բավարար պատասխան[13]: Նրանք տեղավորվեցին 33 ԱՄՆ-ի նահանգներում[14]:

2010թ. տվյալներով Ռուսաստանում ապրում էին 72 հազար մեսխեթցի թուրքեր, սակայն նրանցից քաղաքացիություն ունեին միայն 4825-ը[15]: Այս տվյալները վկայում են, որ մեսխեթցի թուրքերի նկատմամբ ՌԴ իշխանությունների վարած քաղաքականությունը շարունակվեց նաև հետագա տարիներին, թեև քաղաքակացիություն ստացողների թիվը հետզհետե աճեց[16]: Կարելի է ենթադրել, որ ՌԴ իշխանությունների նման քաղաքականությունը կապված էր, առանց այդ էլ բարդ էթնոմշակութային պատկեր ունեցող Հյուսիսային

[9] **Усманов А.О**., նշվ. աշխ., с. 161-162.
[10] **Симоненко В.А.,** նշվ. աշխ., с. 133.
[11] **Swerdlov S.,** Reflections on Transitional Minorities and Human Rights Meskhetians and Hemshins in Georgia and Krasnodar // Anthropology, Minorities, Multiculturalism, Krasnodar, 2004, №5, p. 26.
[12] **Гаджиев А.,** Ахалцихские турки: история, этнография, фольклор // ИРС Наследие, 2007, №2 (26), с. 12.
[13] **Osipov A.,** Recent Developments Concerning the Meskhetian Turks in Krasnodar Krai. 2006-2007 // Humans Right Centre "Memorial", Russia, 2007 - http://old.memo.ru/hr/discrim/meshi4/MTS%20in%20KK.HTML (13.01.2019).
[14] **Aydıngün A., Harding C.B., Hoover M., Kuznetsov I., Swerdlow S.,** Meskhetian Turks. An Introduction to their History, Culture and Resettlement Experiences // Culture Profile, 2006, №20, p. 26.
[15] Meskhetians or Meskhetian Turks - https://minorityrights.org/minorities/meskhetians-or-meskhetian-turks/ (14.01.2019).
[16] **Мамаев М.И.,** Турки-месхетинцы в этнополитической ситуации Северного Кавказа: выход из кризисного состояния // Известия Самарского научного центра Российской академии наук, т. 12, 2010, №2, с. 287.

Կովկասում ժողովրդագրական կտրուկ փոփոխություններից խուսափելու հետ:

**Մեսխեթցի թուրքերի հարցը Ռուսաստանի և Վրաստանի հարաբերություններում**

ԽՍՀՄ փլուզմանը հաջորդած տարիների ընթացքում մեսխեթցի թուրքերի հայրենադարձության հարցը ՌԴ և Վրաստանի իշխանությունների միջև քննարկվեց տարբեր մակարդակներում: Սկզբում դա միջկառավարական հանձնաժողովների միջև բանակցությունների տեսք ուներ: Մինչ 2008թ. Վրաստանի և Ռուսաստանի միջև հակամարտությունը մեսխեթցի թուրքերի հարցը այդ պետությունների ներկայացուցիչների կողմից քննարկվում էր առավելապես միջազգային կառույցների շրջանակներում:

Այս փուլում Ռուսաստանը հանդես էր գալիս մեսխեթցի թուրքերի Վրաստանում վերաբնակեցնելու դիրքորոշմամբ, սակայն այդ ուղղությամբ նշանակալի քայլեր Վրաստանի հետ հարաբերություններում տեղի չունեցան: Միայն 2008թ. օգոստոսյան պատերազմից հետո Վրաստանի և Ռուսաստանի քաղաքական գործիչները սկսեցին հանդես գալ փոխադարձ մեղադրանքներով:

2008թ. հոկտեմբերին ՌԴ Պետական Դումայում ընդունված հայտարարության մեջ նշվում էր, որ մեսխեթցի թուրքերի հայրենադարձության մասին օրենքը կրում է, հռչակագրի բնույթ և նրա նպատակն է ստեղծել խնդրի լուծման պատրանք[17]: Բացի այդ, ռուս քաղաքական գործիչները ԵԽԽՎ-ին և միջազգային հանրությանը կոչ արեցին ճնշում գործադրել Վրաստանի վրա և ստիպել նրանց կատարել մեսխեթցի թուրքերի հայրենադարձության վերաբերյալ ստանձնած պարտավորությունները[18]: Հետագա տարիներին Ռուսաստանի այդ դիրքորոշումը մնաց անփոփոխ: Այս հարցում նման դիրքորոշում ունեն նաև Թուրքիան և Ադրբեջանը, որոնք շահագրգռված են մեսխեթցի թուրքերին վերադարձնել բացառապես Սամցխե-Ջավախեթի շրջան, որպեսզի իրականացնեն իրենց աշխարհաքաղաքական նպատակները[19]: Այս դեպքում նրանք իրենց տրամադրության տակ ևս մեկ ճնշման լծակ կունենան ազդելու ինչպես Թբիլիսիի, այնպես էլ Երևանի վրա, քանի որ Հայաստանն ամբողջովին շրջապատված կլինի թուրքալեզու բնակչությամբ: Մեսխեթցի թուրքերի Վրաստան վերադարձի հարցում Ռուսաստանն ի տարբերություն Թուրքիայի և Ադրբեջանի առաջ չի քաշում նրանց Սամցխե-Ջավախեթիում բնակեցնելու պահանջը, ինչը Վրաստանի իշխանությունների համար համեմատաբար ավելի ընդունելի է:

Վրացական կողմը շտապեց մեղադրել ռուսական իշխանություններին մեսխեթցի թուրքերի իրավունքների խախտման և նրանց հանդեպ խտրականության համար: Վրաստանում նաև կարծիք ձևավորվեց, որ պաշտոնական Մոսկվան հաճախ օգտագործում է մեսխեթցի թուրքերի գործոնը, ավելի ճիշտ, ինչպես ասում են Թբիլիսիում «մեսխերի» կամ «մահմեդական վրացիների» հարցը ի վնաս վրաց ժողովրդի շահերին[20]: Վրաստանում նաև պնդում էին, որ պաշտոնական Թբիլիսին դրսևորել է բարի կամք՝ համաձայնվելով ընդունելու մեսխեթցի թուրքերին, չնայած որ ներգրավված չի եղել նրանց տեղահանման գործում: Դրա համար նրանք մեղադրում են ԽՍՀՄ իշխանություններին, հետևաբար, նրանց իրավահաջորդ ՌԴ-ն պետք է որոշակի պարտավորություններ ստանձնի մեսխեթցի թուրքերի վերադարձի ֆինանսավորորման հարցում[21]:

Կողմերի նման դիրքորոշումը ընդհանուր առմամբ պահպանվեց նաև հետագա տարիներին: Այդ մասին է վկայում ՌԴ-ում գործող մեսխեթցի թուրքերի «Վաթան» կազմակերպության ներկայացուցիչների ՌԴ նախագահ Վ. Պուտինին ուղղված իրենց իրավունքների վերականգնման որոշում ստորագրելու դիմու-

[17] **Оганесян А.,** Политика Турции и Грузии в отношении проблем турок-месхетинцев // Կանթեղ գիտական հոդվածների ժողովածու, 2001, №3, էջ 171:

[18] ГД призвала надавить на Грузию в вопросе репатриации турок-месхетинцев - https://ria.ru/20081017/153397643.html (17.01.2019).

[19] **Գալոյան Կ.,** Մեսխեթցի թուրքերի հիմնախնդիրը Թուրքիայի քաղաքականության համատեքստում // Регион и мир, том X, 2019, №3, с. 41-45; Арис Казинян: Грузия и американо-турецкий проект по возвращению турок-месхетинцев: история и реальность - https://regnum.ru/news/671851.html (17.01.2019).

[20] **Мамулия Г.,** Концепция государственной политики Грузии в отношении депортированных и репатриированных в Грузию месхов. История и современность - https://www.ca-c.org/journal/cac-02-1999/st_19_mamulija.shtml (09.01.2019)

[21] Закон Грузии «О репатриации»: достоинства и недостатки - http://newcaucasus.com/society/13095-zakon-gruzii-o-repatriatsii-dostoins.html (18.01.2019).

մի[22] արձագանքը: Նախագահի աշխատակազմից ստացած պատասխանում նշվում էր, որ մեսխեթցի թուրքերը բռնաճնշումների են ենթարկվել «Վրաստանի ԽՍՀ իշխանությունների համապատասխան որոշումներով և Վրաստանի ԽՍՀ տարածքում», ուստի ՌԴ ներքին գործերի մարմինները չունեն համապատասխան իրավական հիմք տրամադրել իրավունքները վերականգնող փաստաթղթեր և խորհուրդ էր տրվում դիմել Վրաստանի իշխանություններին[23]: Վրաստանի խորհրդային կառավարությանը մեղադրելը, տվյալ պարագայում, կարելի է համարել անհիմն, քանի որ դժվար է պատկերացնել, թե ինչպես կարող էին միութենական հանրապետության կառավարության ներկայացուցիչները նման մասշտաբային ծրագիրն ինքնուրույն իրականացնել և Մոսկվայի հետ կապ չունենալ:

Ռուսաստանում մեսխեթցի թուրքերը, որպես կանոն, իրենց արտաքսման յուրաքանչյուր տարեդարձը նշում են հանրահավաքներով, որոնցում վրաց իշխանություններից պահանջում են կազմակերպել զանգվածային հայրենադարձություն Վրաստան[24]: Ռուսաստանը դեռևս պաշտպանում է այդ մոտեցումը, իսկ վրացի քաղաքական գործիչները փորձում են չշոշափել այդ հարցը: «Վրացական երազանք»-ի իշխանության գալուց հետո, Վրաստանի կառավարությունը պաշտոնական դիրքորոշում չի արտահայտել մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի նկատմամբ:

**Եզրակացություն**

Վերոգրյալի հիման վրա կարելի է եզրակացնել, որ մեսխեթցի թուրքերի նկատմամբ Ռուսաստանի վարած քաղաքականությունը ԽՍՀՄ փլուզումից հետո էական փոփոխություններ չի կրել: ՌԴ-ում մեսխեթցի թուրքերը ի սկզբանե դիտարկվում էին որպես ժամանակավոր բնակիչներ և ակնկալում էին, որ նրանք կվերադառնան Վրաստան, կամ կմեկնեն այլ երկրներ: Նման քաղաքականությունը հանգեցրեց ՌԴ հարավային շրջաններում միջէթնիկական լարվածության:

Վրաստանի հետ հարաբերություններում ի սկզբանե որոշ չափով քննարկվում էր մեսխեթցի թուրքերի հարցը, սակայն 2008թ. օգոստոսյան պատերազմից հետո այն ավելի շատ փոխադարձ մեղադրանքների առիթ դարձավ: Ըստ էության, Ռուսաստանի Դաշնության իշխանությունները փորձում են մեսխեթցի թուրքերի հարցը օգտագործել Վրաստանի վրա ճնշում գործադրելու համար: Սակայն, ի տարբերություն Թուրքիայի և Ադրբեջանի, ռուսական կողմը չի պահանջում նրանց վերադարձը բացառապես Սամցխե-Ջավախեթի տարածաշրջան:

Հարկ է նշել, որ Սամցխե-Ջավախեթիում մեսխեթցի թուրքերի զանգվածային վերադարձը Ղարաբաղյան հակամարտության, ինչպես նաև Անկարայի և Բաքվի կողմից կազմակերպած տրանսպորտային շրջափակման պայմաններում կարող է օգտագործվել նրանց կողմից՝ որպես Հայաստանի վրա աշխարհաքաղաքական ճնշման լրացուցիչ գործոն: Մեսխեթցի թուրքերի նկատմամբ Ռուսաստանի դիրքորոշումը թեև որոշ վտանգ պարունակում է Հայաստանի համար, սակայն վերաբնակեցման վայրի շուրջ սկզբունքային մոտեցման բացակայությունը չի հակասում հայ ժողովրդի շահերին:

**Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ**


1. **Գալոյան Կ.,** Մեսխեթցի թուրքերի հիմնախնդիրը Թուրքիայի քաղաքականության համատեքստում // Регион и мир, том X, 2019, №3.
2. **Aydıngün A., Harding C.B., Hoover M., Kuznetsov I., Swerdlow S.,** Meskhetian Turks. An Introduction to their History, Culture and Resettlement Experiences // Culture Profile, 2006, №20.
3. Meskhetians or Meskhetian Turks - https://minorityrights.org/minorities/meskhetians-or-meskhetian-turks/ (14.01.2019).
4. **Osipov A.,** Recent Developments Concerning the Meskhetian Turks in Krasnodar Krai. 2006-2007 // Humans Right Centre "Memorial", Russia, 2007 - http://old.memo.ru/hr/discrim/meshi4/MTS%20in%20KK.HTML (13.01.2019).
5. **Swerdlov S.,** Reflections on Transitional Minorities and Human Rights Meskhetians and Hemshins in Georgia and Krasnodar // Anthropology, Minorities, Multiculturalism, Krasnodar, 2004, №5.
6. Арис Казинян: Грузия и американо-турецкий проект по возвращению турок-месхетинцев:


[22] **Хизриева Г. А.,** Турки – месхетинцы просят президента Путина о реабилитации - https://riss.ru/analitycs/9354/ (22.03.2019); **Мамедов А.,** С реабилитацией ахыска восторжествует историческая справедливость: взгляд из Баку - http://www.kavkazoved.info/news/2015/02/19/s-reabilitaciej-ahyska-vostorzhestvuet-istoricheskaja-spravedlivost-vzglyad-iz-baku.html (22.03.2019).

[23] **Усманов А.О**., նշվ. աշխ., c. 164.

[24] Турки-Месхетинцы в годовщину депортации потребовали реабилитации своего народа - https://www.kavkaz-uzel.eu/articles/312488/ (19.01.2019).

история и реальность - https://regnum.ru /news/671851.html (17.01.2019).
7. **Бугай Н.Ф.,** Турки из Месхетии: долгий путь к реабилитации (1944–1994). Москва, Изд. дом «РОСС», 1994.
8. **Гаджиев А.,** Ахалцихские турки: история, этнография, фольклор // ИРС Наследие, 2007, №2 (26).
9. ГД призвала надавить на Грузию в вопросе репатриации турок-месхетинцев - https://ria.ru/ 20081017/153397643.html (17.01.2019).
10. Закон Грузии «О репатриации»: достоинства и недостатки - http://newcaucasus.com/society/13095-zakon-gruzii-o-repatriatsii-dostoins.html (18.01.2019).
11. Закон РСФСР «О реабилитации репрессированных народов» - http://pravo.gov.ru/proxy/ips/?docbody=&link_id=15&nd=102011245 (20.03.2019).
12. Закон РФ «О реабилитации жертв политических репрессий» - http://pravo.gov.ru/proxy/ips/?docbody=&nd=102012774 (20.03.2019).
13. **Мамаев М.И.,** Турки-месхетинцы в этнополитической ситуации Северного Кавказа: выход из кризисного состояния // Известия Самарского научного центра Российской академии наук, т. 12, 2010, №2, с. 287.
14. **Мамедов А.,** С реабилитацией ахыска восторжествует историческая справедливость: взгляд из Баку - http://www.kavkazoved.info/news/2015/ 02/19/s-reabilitaciej-ahyska-vostorzhestvuet-istoricheskaja-spravedlivost-vzglyad-iz-baku.html (22.03.2019).
15. **Мамулия Г.,** Концепция государственной политики Грузии в отношении депортированных и репатриированных в Грузию месхов. История и современность - https://www.ca-c.org/journal/cac-02-1999/st_19_mamulija.shtml (09.01.2019).
16. **Оганесян А.,** Политика Турции и Грузии в отношении проблем турок-месхетинцев // Կանթեղ գիտական հոդվածների ժողովածու, 2001, 3.
17. **Осипов А.Г.,** Ферганские события: конструирование этнического конфликта - http://igpi.ru/info/ people/osipov/1172304934.html
18. **Симоненко В.А.,** Месхетинские турки: историческая судьба и проблемы культурной адаптации, дис. канд. ист. наук., Краснодар, 2002.
19. Турки-Месхетинцы в годовщину депортации потребовали реабилитации своего народа - https://www.kavkaz-uzel.eu/articles/312488/ (19.01.2019).
20. **Усманов А.О.,** К вопросу о конституционно-правовой реабилитации месхетинских турок: политико-правовой аспект, Гуманитарные и юридические исследования, 2017, №3.
21. Хизриева Г. А., Турки – месхетинцы просят президента Путина о реабилитации - https://riss.ru/ analitycs/9354/ (22.03.2019).
22. დეპორტირებული მესხები: ფერგანამდე და უკან - http://www.tabula.ge/ge/story/54490-deportirebuli-mesxebi-ferganamde-da-ukan (12.01.2019).